Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց

Թեմա՝ Ուսուցման շերտավորման աշխատանք օժտված երեխաների հետ

Վերապատրաստող, մենթոր՝ Փիրուզա Սարգսյան

Դասվար՝ Աննա Բաղդասարյան

Վաղարշապատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… ..3

ԹԵՄԱ 1

Շերտավոր ուսուցման առանձնահատկությունները……..…….……5

ԹԵՄԱ 2

Օժտվածություն ունեցող երեխաների հետ աշխատանքի կազմակերպումը և ռիսկերը.. ..……11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……...23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ …… 24

ՀԱՎԵԼՎԱԾ---------- 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից կրթությունը նպատակաուղղված է աշակերտների ճանաչողական կարողությունների և ինքնուրույնության զարգացմանը: Այդ պահանջը ենթադրում է այնպիսի կրթական գործընթացի կազմակերպում, որի ժամանակ հաշվի են առնվում յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները: Երեխաների զարգացման հոգեֆիզիոլոգիական տարբերություններն էլ թելադրում են ուսուցման շերտավորման անհրաժեշտություն: Այս ուսուցումը հնարավորություն է տալիս հաշվի առնել աշակերտների անհատական-հոգեբանական կարիքները՝ օգնելով յուրաքանչյուրին շարժվել ըստ իր կարողությունների և ընդունակությունների: Նոր տեղեկատվական այս դարաշրջանում կարևոր ու արդիական է օժտված երեխաների մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտումն ու ճիշտ զարգացումը, քանի որ այդպիսի երեխաներն են մշակույթի , տնտեսության, քաղաքակրթության շարժիչ ուժը: Այս տեսանկյունով՝ մանկավարժների, սոցիոլոգների, հոգեբանների ուշադրության կենտրոնում պետք է լինեն շնորհալի երեխաները: Մերօրյա իրականությունը էապես զգում է խելացի, տաղանդավոր,ինտելեկտուալ երեխաների կարիքը:Ներկայումս բավականին արդիական է շերտավորված ուսուցումը,քանի որ յուրաքանչյուր երեխա, անկախ իր ընդունակություններից և կարողություններից, ուսումնական գործընթացում զբաղվում է իր ընդունակություններին համապատասխան աշխատանքով, դառնում է ավելի ինքնավստահ, վայելում է ուսման նկատմամբ բերկրանք, ապրում է զարգացում:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել շերտավորված ուսուցման դերն ու առանձնահատկությունները կրտսեր դպրոցականների զարգացման գործում և ուսումնասիրել շնորհալի երեխաների հոգեբանական և մանկավարժական բնույթն ու բովանդակությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

ուսումնասիրել խնդրին վերաբերող մանկավարժական, մեթոդական գրականությունն ու վերլուծել շերտավորված ուսուցմանը վերաբերող մանկավարժական մոտեցումները

կարևորել շերտավոր մոտեցումը դպրոցականների զարգացման գործում և մշակել շերտավոր ուսուցման արդյունավետ մեթոդներ

նպաստել երեխաների ընդունակությունների պահպանմանն ու զարգացմանը

Հետազոտության գործնական նշանակությունը՝ կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքները զգալիորեն կօգնեն ուսուցչին օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանք կազմակերպել տարբերակված ուսուցում իրականացնելիս։

Հետազոտության կառուցվածքը, ծավալը։ Սույն աշխատանքը կազմված է ներածությունից, երկու թեմայից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից։

ԹԵՄԱ 1

Ուսուցման շերտավորման առանձնահատկությունները

Ժամանակակից կրթությունը նպատակաուղղված է այդ համակարգում կենտրոնական տեղ զբաղեցնող անձի ճանաչողական կարողությունների և ինքնուրույնության զարգացմանը: Այդ պահանջը ենթադրում է այնպիսի կրթական գործընթացի կազմակերպում, որի ժամանակ հաշվի է առնվում յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները: Այս պարագայում աշակերտը հնարավորություն է ունենում իրեն լիարժեք դրսևորելու, ուսման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու:

Որպես կանոն՝ դասի ժամանակ ուսուցչի ընտրած աշխատանքի միջին տեմպը թվում է նորմալ որոշ աշակերտների համար, մյուսների համար այն բավական արագ է, իսկ մեկ այլ խմբի համար ՝ ավելորդ ձգձգված: Միևնույն ուսումնական խնդիրը երեխաների մի մասի համար կարող է բարդ լինել, իսկ մյուսների համար՝ դյուրին հարց: Այլ խոսքով ուսումնական նյութի յուրացման հաջողությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի գործունեությամբ, այլ աշակերտների կարողություններով և ճանաչողական հնարավորություններով, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով, այդ թվում նաև՝ ընկալման հիշողության մտածական գործունեության, ֆիզիկական զարգացման առանձնահատկություններով:

ՈՒսուցիչը հիմնականում ուսուցումն իրականացնում է՝ հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտի վրա: Սա արհեստականորեն կասեցնում է ուժեղ աշակերտների զարգացումը, նրանք կորցնում են ուսման նկատմամբ հետաքրքրությունը, իսկ թույլ աշակերտները, կարծեք թե <<դատապարտվում են>> մյուսներից հետ մնալուն: Հարկ է նշել, որ միջին կարողությունների տեր աշակերտներն էլ իրարից տարբերվում են, ունեն տարբեր հակումներ ու հետաքրքրություններ, հոգեկան գործընթացի զարգացան տարբեր մակարդակներ: Հետազոտություններից պարզ են դարձել, որ դասի ժամանակ, ուսումնական

գործունեության ընթացքում, ուսուցիչը դժվարանում է այդ խմբին առանձնացնել՝ հաշվի առնելով աշակերտների միջև առկա տարբերությունները: Իսկ դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝ նախնական գիտելիքների տարբերությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչպիսի ընտանիքից է այդ երեխան, նրա բառապաշարը, մտավոր կարողությունները, արժեքային համակարգը, ճանաչողական կարողությունների տարբերությունները՝ ընկալումը, կենտրոնացված ուշադրության տևողությունը, հիշողությունը, մտածողությունը և լեզուն: Որքան տարբեր են աշակերտները, այնքան էլ տարբեր են նրանց բնավորությունները: Տարբեր բնավորության տեր աշակերտներն ունեն սովորելու տարբեր ոճ, մղում, հետաքրքրություններ, վերաբերմունք :

ՈՒսումնական գործընթացում այս և նմանօրինակ խնդիրերի լուծման համար արդյունավետ է կիրառել շերտավորված ուսուցում, որի դերն այսօր կարևորվում է ժամանակակից դասին ներկայացվող պահանջների համակարգում:

Շերտավորված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը , որն էլ , ենթադրում է յուրաքանչյուր սովորողի ուսուցման և զարգացման հարաբերակցում: Շերտավորված ուսուցումն ուսումնադաստիարակչական ճկուն գործընթաց է, որը բնութագրվում է սովորողների անհատական ընդունակությունների հաշվառմամբ: Այդ գործընթացի իրականացման ժամանակ ուսուցիչը ուսումնական նյութը մշակում , դարձնում է դյուրահաս ու մատչելի յուրաքանչյուր աշակերտի համար: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ ուսումնական գործընթացում զբաղված լինի իր ընդունակություններին համապատասխան աշխատանքով: Շերտավորման ժամանակ յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա տվյալ պահին իր կարողություններին համարժեք ծավալի աշխատանք:

Իրականացնելով շերտավորված ուսուցում՝ ուսուցիչը պետք է՝

Ունենա հստակ պատկերացում այն մասին, թե ինչ նպատակով, որ դասերի ընթացքում և ինչպես նա պետք է կիրառի այն;

Ուսումնասիրի և իմանա աշակերտների ընդհանուր պատրաստվածության մակարդակն ուսումնական գործունեության, կոնկրետ տվյալ ուսումնական նյութի յուրացման հարցում:

Կանխատեսի դժվարությունները, որոնք կարող են երեխաների մոտ ի հայտ գալ նոր նյութի յուրացման և տարբերակված առաջադրանքների կատարմանընթացքում:

Մշակի սովորողներին խմբերի բաժանման չափանիշները:

Դասերի ընթացքում կիրառի անհատական և խմբային առաջադրանքներ:

Շերտավոր ուսուցումն իրականացնի ոչ թե մերթընդմերթ, այլ համակարգված՝ կիրառելով այն ուսուցման ողջ ընթացքում:

Միատեսակ վերաբերմունք դրսևորի աշակերտների բոլոր խմբերի նկատամբ:

Նկատի և խրախուսի աշակերտի՝ մի խմբից մյուսին անցումը, այսինքն, ուսուցիչը պետք է կարողանա տեսնել աշակերտի աճը, անընդհատ վերլուծի անհատական և շերտավորված ուսուցման արդյունավետությունը՝ նշելով առաջընթացն ու դժվարությունները:

Հստակ պատկերացում ունենա այն մասին, թե ինչպես պետք ՝ շարունակի աշխատանքը հետագա դասերի ընթացքում, այսինքն՝ կարողանա պլանավորել սովորողների հետագա գործունեությունը (անհատական և խմբային):

Այսպիսով, բացահայտ նկատելի է, որ ուսուցման անհատականացում և շերտավորում իրականացնող ուսուցչի առջև ծառանում են հետևյալ խնդիրները.

Ինչպե՞ս շերտավորել աշակերտներին:

Ի՞նչ չափանիշներով գնահատել նրանց առանձնահատկությունները:

Ինչպե՞ս որոշել նրանց զարգացման մեկնարկային մակարդակը:

Որոշակի աշակերտների հետ աշխատանքի ո՞ր ուղղությունները կլինեն առավել կարևոր և այլն:

Ուսումնական գործընթացում շերտավորված ուսուցումը ենթադրում է աշակերտներին դիտարկել նույնանման կարիք ունեցող խմբերում՝ ըստ ուսումնական մակարդակների՝ հաշվի առնելով նրանց անհատական ընդունակությունները, պատրաստականության մակարդակը, ուսումնաճանաչողական գործունեության նկատմամբ ունեցած շարժառիթները և այլն:

Աշխատանքն ավելի ակնառու դարձնելու նպատակով աշակերտներին պայմանականորեն բաժանում են խմբերի.

Առաջին խումբը այն աշակերտներն են, որոնք դժվարությամբ են յուրացնում ծրագրային նյութը, կարիք ունեն տարաբնույթ օգնության ձևերի: Առաջին խմբի աշակերտները ուսումնական գործընթացում ինչ–որ չափով կարողանում են հաղթահարել պասիվությունը: Հիմնականում նրանք օգնության կարիք ունենում են առաջադրանքի կատարման սկզբում, այնուհետև կարող են ինքնուրույն կատարել: Այս խմբի աշակերտների գործունեությունը հարկավոր է մշտապես կազմակերպել, մինչև նոր նյութի յուրացումը: Այս մոտեցումից հետո աշակերտները դառնում են ավելի ինքնավստահ և կարողանում են իրենց գործողությունների վերաբերյալ հաշվետվություն տալ: Սա վկայում է թեև դժվար, սակայն ինչ–որ տեղ նյութի գիտակցված յուրացման մասին: Այս խմբի աշակերտները դժվար են կատարում եզրահանգումներ ու ընդհանրացումներ: Զարգացած չէ խոսքը, տեղին չեն օգտագործում եզրույթները , եթե նույնիսկ անգիր վերարտադրում են, ապա չեն պատկերացնում ասվածի էությունը, զուրկ են ինքնաստուգում կատարելու կարողությունից :

Երկրորդ խումբը այն աշակերտներն են, որոնք ուսումնառության ընթացքում ունենում են բավականին հաջողություններ: Նրանք հիշում և մտապահում են ուսումնասիրվող նյութը, սակայն չեն կարողանում ինքնուրույն կատարել տարրական եզրահագումներ և ընդհանրացումներ: Նրանք կարող են թույլ տալ սխալներ, սակայն աննշան օգնության դեպքում դրանք ուղղում են և շտկում: Այս խմբի աշակերտները հեշտ են կատարում առաջադրանքները, երբ դրանք մոդելավորված են կամ

ներկայացված պատկերների և նկարների միջոցով: Նրանք շատ դժվար են մտապահում եզրահանգումները :

Երրորդ խումբը այն աշակերտներն են, որոնք համընդհանուր ուսուցման ժամանակ լավ ըմբռնում են ուսումնական ծրագրային նյութը, բոլոր առաջադրանքները կատարում են ինքնուրույն: Նրանք կարողանում են իրենց գործողությունները մեկնաբանել, բառային բնութագրումներով ներկայացնել: Երրորդ խմբի աշակերտներն ավելի արագ են մտապահում առաջադրանքների լուծման եղանակները :

Չորրորդ խումբը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներն են / ԿԱՊԿՈՒ /, որոնց ուսուցումը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանների օգնությամբ: Այս խմբում ընդգրկված աշակերտները կարիք ունեն օժանդակ ուսուցման :

Տարբեր աշակերտների գիտելիքների յուրացման մակարդակը միօրինակ չէ: Շերտավորված ուսուցման ժամանակ որոշակիացվում է տեղեկույթի ընկալման մակարդակներ.

1. Վերարտադրողական մակարդակ. Կարողանալ վերարտադրել հասկացությունների, կանոնների հատկանիշները, գործողությունների հայտնի եղանակներով վերարտադրությունը հնարավորություն է տալիս լուծել խնդրիը՝ տրված օրինակով:

2. Կառուցողական մակարդակ. Առաջադրանքների կատարման յուրացված քայլաշարը թույլ է տալիս օգտագործել նախկինում ստացած գիտելիքները փոփոխված իրավիճակներում, որը նպաստում է կապեր հաստատել հասկացությունների միջև, թեև առայժմ թույլ չի տալիս կատարել խոր ընդհանրացումներ կամ գիտելիքը կիրառել նոր իրավիճակներում:

3. Ստեղծագործական մակարդակ.Ամուր յուրացված հիմնական դրույթները թույլ են տալիս ապահովել գիտելիքների ընդհանրացումներ կատարելու բարձր մակարդակ, միջառարկայական կապեր ստեղծել, ինչն իր հերթին նպաստում է ստացած գիտելիքները ստեղծագործաբար կիրառել նոր իրավիճակներում:

Շերտավոր ուսուցումն ունի և իր դրական և բացասական կողմերը:

Դրականներից են .

- Ուժեղ սովորողները հնարավորություն են ունենում իրենց զարգացման մեջ առաջընթաց ապրել
- Ուժեղ սովորողները ավելի ինքնուրույն են դառնում
- Ուժեղ աշակերտներն ավելի մոտիվացվում են ուսման նկատմամբ
- Հնարավորություն է ստեղծվում ուշադրություն դարձնել հետ մնացողներին և ստուգել նրանց
- Բարձրանում է թույլ աշակերտի ինքնագնահատականը

Բացասական կողմերից են .

- Թույլերը հնարավորություն չեն ունենում հասնել ուժեղներին
- Թույլ խմբերում նվազում է ուսման շարժառիթը

ԹԵՄԱ 2

Օժտվածություն ունեցող երեխաների հետ աշխատանքի կազմակերպումը և ռիսկերը

Օժտվածությունը համալիր, կյանքի ընթացքում զարգացող հոգեկանի որակն է, որը բնորոշում է մարդու կողմից մեկ կամ մի քանի գործունեության տեսակների մեջ առավել բարձր արդյունքների հասնելու հնարավորությունը՝ այլ մարդկանց համեմատ: Օժտված երեխան առանձնանում է վառ, ակնհայտ, երբեմն բացառիկ, աչքի ընկնող ձեռքբերումներով կամ ունի ներքին նախադրյալներ այդպիսի ձեռքբերումների համար, այս կամ այն գործունեության տեսակում:

Օժտված երեխաները մանկուց սկսած իրենց յուրովի մտածելակերպով «զայրացնում են» մարդկանց: Հարկավոր է նման երեխաներին ճիշտ ժամանակին նկատել, բացահայտել և ճիշտ ուղղորդել նրանց զարգացումը:Հարկ չկա նրանց ստիպել սովորել, նրանք իրենք են աշխատանք գտնում իրենց համար և շատ հաճախ բարդ ինտելեկտուալ բնույթով օժտված երեխան ձգտում է շփվել մեծերի հետ, քանի որ նրանք իրեն լավ են հասկանում,քան հասակակիցները, որոնք հաճախ ծաղրում են: Օժտված երեխան ձգտում է շփվել մեծերի հետ ինչպես հավասարը հավասարի հետ, հաճախ ծայրահեղ էմոցիոնալ են, բռնկվող, անհեթեթ պատճառներից հեշտ գրգռվում են, բայց կամակոր չեն: Ունեն հումորի սուր զգացում, հստակ խոսքի զարգացում, հատուկ կամ առանձնահատուկ ընկալում, ինչը առանձնացնում է նրանց հասակակիցներից: Նրանք կարիք ունեն հատուկ դաստիարակության, հատուկ անհատական ուսումնական ծրագրերի, պատրաստված ուսուցիչների, մասնագետների: Դպրոցներում ուսուցիչները գիտեն և հաշվի են առնում յուրաքանչյուր օժտված երեխայի հնարավորությունները: Մանկավարժի աշխատանքը նման երեխաների հետ բարդ է,քանի որ նրանք համառ են, հարցասեր, ընդգծված ինքնասեր: Դեռահասության տարիքում այսպիսի երեխաները սովորաբար ունենում են բարձր ինքնագնահատական, քանի որ ծնողների և ընտանիքի մնացած անդամների համար նրանք դառնում են <<պաշտամունք, ընտանիքի կուռք>>, որի արդյունքում երեխայի ընդունակությունները չափից ավելի բարձր են գնահատվում, որը շատ

վտանգավոր է: Այսպիսով, օժտված երեխայի հետ գործ ունեցող մանկավարժի և ծնողի վրա մեծ պատասխանատվություն է ընկնում ինչպես ընդունակությունների զարգացման, այնպես էլ անձի ձևավորման առումով: Առաջին հերթին նրանցից պահանջվում է չճնշել օժտվածի հարցասիրությունը, չզլանալ նրանց հարցերին խոր ու սպառիչ պատասխաններ տալուց և ցուցաբերել համբերատարություն:

Մանկավարժին պետք է խրախուսի նրանց ինքնուրույնության, ոչ ստանդարտ մտածողության դրսևորումները: Կան երեխաներ,որոնց մոտ այդ օժտվածությունը թաքնված է: Նրանցից կարելի է առանձնացնել ֆանատներին, ովքեր հրապուրված են ինչ-որ մի գործով: Նման երեխաների համար դպրոցը դարձնում է ձևական մի բան, ուր նրանք ստիպված են հաճախում: Կարող են հանդիպել և այսպիսի երեխաներ՝

Ծույլեր. այս երեխաները ընդունում են ցանկացած ինֆորմացիա, բայց չեն ուզում ոչինչ անել, ոչինչ սովորել:

Համեստներ. նման երեխաները աչքի են ընկնում ցածր ինքնագնահատականով, չեն սիրում երբևէ իրենց ցուցադրել, եթե նույնիսկ դասը սովորել են և գիտեն, չեն փորձում ձեռք բարձրացնել և պատասխանել:

Նևրոտիկներ կամ փսիխոպատներ. սրանք մշտապես գրգռված են և միշտ գտնվում են կոնֆլիկի մեջ ընտանիքի անդամների և շրջապատի հետ:

Տարօրինակներ. սրանք այնպիսի երեխաներ են, ովքեր չեն սիրում վիճաբանել մարդկանց հետ: Սիրում են մեղմ միջավայր, հանգիստ են իրենց

պահում, առանձնանում են աղմկոտ միջավայրից և ավելի շատ ինքնամփոփ են:

Գոյություն ունեն օժտվածության հետևյալ տեսակները՝

Ինտելեկտուալ, մտավոր օժտվածություն: Գերբարձր հետաքրքրասիրություն, մտածական գործընթացների բացառիկ դինամիկություն, օպերատիվություն, նախընտրած գործունեության ոլորտում ամբողջական ներգրավում, պրակտիկ

իրավիճակներում գիտելիքների և կարողությունների հաջող կիրառում, վերլուծական մտքի սրություն, խնդրիներ դնելու և լուծելու հաստատուն հնարավորություն, օպտիմալ ընտրություն, պլանավորում կատարելու զարգացած հմտություններ, նպատակին հասնելու համար համառություն: Ինտելեկտուալ օժտվածությունը բնութագրող առանձնահատկությունները սրանք էին: Ինտելեկտուալ օժտվածությունը նաև վերլուծելու, մտածելու, փաստերը համադրելու ընդունակությունն է: Նման երեխաներին անվանում են գիտունիկներ: Նրանց մեջ կան այնպիսիք, ովքեր սովորում են մեկ-երկու առարկա գերազանց, մյուսների վրա ուշադրություն չեն դարձնում կամ էլ չեն հասցնում:

Ստեղծագործական օժտվածություն: Ինֆորմացիան վերակառուցելու կարողություն, նորովի մտածելու և անելու ձգտում, ստեղծագործականություն, ամենօրյա կենցաղային միջավայրի ստերիոտիպերի վերացում, հետազոտական ակտիվություն, մտածողության ճկունություն, հաճախակի իմպրովիզներ, անկախություն, պայմանականությունների և հեղինակությունների նկատմամբ թեթև վերաբերմունք: Սրանք էլ ստեղծագործական օժտվածության բացահայտ առանձնահատկություններն են: Կարևոր է ժամանակին նկատել նման երեխաներին և օգնել նրանց: Ստեղծագործական օժտվածությունը դրսևորվում է նաև աշխարհը ոչ ստանդարտ պատկերացնելու և ոչ շաբլոն մտածելու կարողությամբ: Սակայն այսպիսի երեխաներից շատերը հաճախ չեն հասնում իրենց նպատակին և համարվում են անհաջողակ:

Սոցիալական կամ ինչպես ասում են լիդերային օժտվածություն: Այլ մարդկանց գործունեությունը կազմակերպելու և ղեկավարելու ձգտում, մեծահասակների և հասակակիցների հետ ազատ և հեշտ շփում, որոշակի չափով կարգավորում է փոխհարաբերությունները համադասարանցիների միջև, նախաձեռնողականություն է դրսևորում, իր վրա մեծ պատասխանատվություն է վերցնում, կոնֆլիկտների լուծման գործում դրական ազդեցություն է ունենում:

Գեղարվեստական կամ երևակայական ոլորտի օժտվածություն: Այս տիպի երեխան նախընտրում է վիզուալ ինֆորմացիան, մանրամասն հիշում և գեղարվեստորեն է

ընկալում տեսածը, լսածը, սուր երևակայություն ունի, հաճույքով գիտափորձեր է կատարում՝ օգտագործելով գեղարվեստական արտահայտչամիջոցները, արվեստի տարբեր տեսակներով է գրավվում, վարպետության հասնելու համառություն է ցուցաբերում:

Ակտուալ և պոտենցիալ օժտվածություն: Ակտուալ օժտվածությունը երեխայի հոգեկան զարգացման մեջ արդեն ձեռք բերված այնպիսի ցուցանիշների հոգեբանական բնութագիրն է , որոնք դրսևորում են կոնկրետ առարկայական ոլորտում գործունեության կատարման առավել բարձր մակարդակով՝ տարիքային և սոցիալական նորմայի համեմատությամբ: Ակտուալ օժտվածությամբ երեխաների մեջ առանձնահատուկ կատեգորիա են կազմում տաղանդավոր երեխաները: Պոտենցիալ օժտվածությունը երեխայի այնպիսի հոգեբանական բնութագիր է, որն ունի միայն որոշակի հոգեկան հնարավորություններ, բայց չի կարողանում իրականացնել իր հնարավորությունները տվյալ պահին՝ ֆունկցիոնալ անբավարար լինելու պատճառով: Այդ պոտենցիալի չզարգանալը կարող է բացատրվել մի շարք հանգամանքներով (դժվար ընտանեկան հանգամանքներ, անբավարար մոտիվացիա, ինքնակառավարման ցածր մակարդակ, անհրաժեշտ կրթական միջավայրի բացակայություն և այլն):

Ակնհայտ և թաքնված օժտվածություն: Ակնհայտ օժտվածությունը դրսևորվում է երեխայի գործունեության մեջ բավականին վառ և ակնհայտ կերպով՝ դեպքում անբարենպաստ պայմանների դեպքում ևս: Թաքնված օժտվածությունը երեխայի գործունեության մեջ դրսևորվում է պակաս արտահայտվածությամբ, թաքնված ձևով:

Հանճարեղ մարդկանց կենսագրությունը ուսումնասիրելով՝ շատ հեշտ կարելի է համոզվել: Որպես կանոն՝ յուրաքանչյուրի կյանքում եղել է ինչ-որ մեկը, որը տեսել է ապագա հանճարի երևելի ընդունակությունները և հավատացել է: Տաղանդը միայն ազատության մեջ է ծաղկում: Իսկ ինչպե՞ս պայմաններ ստեղծենք ընդունակության զարգացման, օժտված երեխայի՝ կայացած ստեղծական ճակատագրով մարդ «դառնալու» համար: Ոչինչ այնպես չի սպանում

ընդունակությունը, ինչպես ստանդարտ, անկյանք, միջինացված մոտեցումը,

անպտուղ առաջադրանքները, անվերջ ընդհանուր աշխատանքը: Օժտվածությունընեղ, խստորեն սահմանված շրջանակներում չի զարգանում: Որպեսզի ընդունակությունները զարգանան պետք է մշտապես մարզել, անհատական աճի համար տարածություն է անհրաժեշտ: Երեխան պետք է սովորի դժվարություններ հաղթահարել, խիզախել, նպատակին հասնելու համար համառություն ցուցաբերել, պատասխանատվություն կրել: Այս կարևոր անձնային որակների զարգացմանը նպաստում է մշտապես խնդրահարույց իրավիճակների հաղթահարումը՝ հայտնաբերման և ստեղծագործելու ուրախություն զգալու հնարավորության հետ: Շատ արդյունավետ է, օրինակ, աշխատանքը փոփոխվող կազմով փոքր խմբերում, որտեղ երեխան զրուցընկեր, ընդդիմախոս, նման հետաքրքրություններով ընկեր է գտնում, սովորում է իր ինքնատիպ գաղափարները մատչելի արտահայտել և դրանքընկերների կարծիքի հետ համադրել:

Ի վերջո, խմբային աշխատանքն ուսուցչին ավելի շատ հնարավորություն է տալիս տարբեր բարդության առաջադրանքներ կիրառելու: Հասկանալի է, որ դա դասին պատրաստվելու ավելի շատ ժամանակի ծախս է պահանջում: Այդ ծախսերն անխուսափելի են օժտված երեխաների հետ լրջորեն աշխատելու պատրաստ ուսուցչի համար: Չէ՞ որ զարգացման համար այդպիսի երեխաներին անհրաժեշտ էորակապես այլ մակարդակի ուսումնական նյութեր ուսումնասիրել: Դասերի ժամանակ շփման բարձր մակարդակ պետք է ապահովել, օգտագործել մինչառարկայական կապեր, շրջապատող իրականությունն ուսումնասիրելու

նկատմամբ համակարգված մոտեցում: Չէ՞ որ խնդրի մեկնաբանման ժամանակ

օժտված երեխաները ոչ ստանդարտ մոտեցումներ են ցուցաբերում, երևույթների և գործընթացների ինքնատիպ, ավելի լայն դիտարկում: Օժտված երեխաները հարցերի պատասխանները ինքնուրույն փնտրելու կարիք ունեն, որի արդյունքում նրանք

բացահայտում են ոչ ակնհայտ կապերը և գտնում են ինքնատիպ լուծումներ:

Հաճախ դպրոցական կյանքում օժտված երեխաներին ուղեկցում են փոխհարաբերությունների դժվարությունները: Շատ բան կախված է նրանից, թե ուսուցիչները ինչպես կվերաբերվեն բոլոր մյուսներից շատ հստակ առանձնացվող երեխային: Դա պրոֆեսիոնալիզմի ցուցանիշներից մեկը կարելի է համարել. լավ ուսուցիչն ընդունակ աշակերտին ոչ միայն լրացուցիչ աշխատանքի աղբյուր, այլ նաև սեփական զարգացման հնարավորություն է համարում: Մոսկվա՝ վերապատրաստման դասընթացների եկած մի դասվար պատմում էր, թե ինչպես իր դասարան էր ընկել մի երեխա, որն «ամեն ինչ գիտեր», այդ թվում՝ այնպիսի մի ժողովրդի հնագույն էպոս, որի մասին ուսուցչուհին նրանից էր լսել: Պատկերացնելով՝ ինչպես պետք է ինքը տարրական դպրոցի ծրագրով ուսուցանի այդ քայլող հանրագիտարանին, ուսուչուհին սարսափում էր: Սակայն երբ դասարանը պատրաստվում էր զբոսանքի, նա տեսավ, որ այդ երեխան կոշիկի քուղերը չի կարողանում կապել: «Եվ թեթևացած հասկացա, որ նրան սովորեցնելու բան ունեմ»,- ժպտալով ավարտեց նա: Դա, իհարկե, չի նշանակում, թե ուսուցչուհին պատրաստվում է նրան միայն կապիչները կապել սովորեցնել: Պարզապես զգացել է, որ չնայած գլխում տեղեկատվության մեծ ծավալին՝ իր կողքին մանչուկ է, որին ինքը կարող է օգնել ընդունակությունները զարգացնելու:

Ի դեպ, պետք է խոստովանել, որ օժտված երեխաներն ուսուցիչների համար նաև միանգամայն իրական ամենօրյա դժվարություններ են առաջացնում : Օրինակ՝ նրանք հաճախ խախտում են դասարանի կարգապահությունը. ձանձրանում են մտավոր թերբեռնվածության պատճառով: Առաջադրանքը վայրկենապես կատարելով՝ տեղում անհանգիստ շարժվում են, պառկում նստարանին՝ շեղելով

մյուսների ուշադրությունը: Կամ էլ առաջադրանքը կատարում են նստարանի տակ սողալու կամ այլ անկարգության ընթացքում, քանի որ կարող են մի քանի գործ միաժամանակ անել: Միակ փրկությունը երեխային հետաքրքիր առաջադրանքներով ծանրաբեռնելն է: Ընդ որում առաջադրանքները պետք է ապահովվեն զարգացումը ոչ միայն այն ուղղությամբ, որը երեխային հատկապես

հաջողվում է: Օժտված երեխաների ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ նրանց ունակությունները սկսում են շահագործել՝ հանուն օլիմպիադաներում և մրցումներում հաղթանակի խրախուսելով միակողմանի զբաղմունքն ու վարժանքը: Իսկ թույլ կողմերը այդպես էլ կարող են առանց որևէ ուշադրության և զարգացման մնալ: Օրինակ՝ կարող է կաղել բնական կամ ճշգրիտ գիտությունների ոլորտում օժտված երեխաների լեզվական արտահայտչամիջոցների զարգացումը, որն ուղղակի չի հասցնում նրանց մտավոր բուռն աճի հետևից: Այդ դեպքում ևս շատ օգտակար են խմբային քննարկումները, որոնց ժամանակ երեխայի մեջ շահագրգռություն է առաջանում իր մտքերն արտահայտելու այնպես, որ իրեն հասկանան: Եվ ուսուցիչը համբերատարություն պետք է դրսևորի, օգնի նրան ձևակերպելու մտքերը, և ոչ թե ընդհատի սովորական «Նստիր, մտածիր» արտահայտությամբ: Եթե օժտված երեխան դժվարությամբ է արտահայտում մտքերը, կարելի է խմբի բոլոր անդամներին առաջարկել նախ գրի առնել առաջացած գաղափարները: Դա ավելի շատ ժամանակ և ձևակերպման վրա կենտրոնանալու հնարավորություն կտա: Օժտված երեխային սպառնացող մեկ այլ վտանգ է անհատական զարգացման խեղաթյուրումը: Բոլորին հայտնի են դեպքեր, երբ ամբողջ ընտանիքը համառորեն և հափշտակությամբ փառաբանում է երեխայի տաղանդը, նրան երես տալիս ու փափկակեցության սովորեցնում: Գործնականում ծնված օրվանից իր մասին լսելով հիացմունքի այդ չափազանցված խոսքերը՝ երեխան սկսում է նկատմամբ բացառիկ վերաբերմունք ակնկալել և իրեն շրջապատողների հետ համապատասխան ձևով վարվել: Դա ամեն դեպքում երեխայի համար կարող է հիվանդագին հետևանքներ ունենալ: Եվ հատկապես, եթե զարգացման մեջ առաջ անցնելը ժամանակավոր բնույթ է ունեցել. ուսման առաջին տարիներին եղել է աստղ, իսկ որոշ ժամանակ անց հասակակիցները սկսել են առաջ անցնել: Եվ վերջ, երեխան դա ընդունում է այդ որպես իր ճակատագրի ձախողում: Ի դեպ, ծնողների չափազանցված ակնկալիքները ստեղծագործական զարգացման համար լուրջ արգելք կարող են դառնալ: Նրանք իրենց սեփական չիրականացած հավակնություններն ու գերազանցված սպասելիքները բարձում են երեխաներին, նրանց չեն սովորեցնում պարտվել: Այդ պատճառով ամեն մի

վրիպում է, թվում է անուղղելի, իսկ հնարավոր անհաջողության սարսափը կաթվածահար է անում իրադարձությունների զարգացումը: Լավ կլինի, որ ուսուցիչը հաճախակի և հետևողականորեն հիշեցնի ծնողներին այդ մասին:

Եվ ընհանրապես օժտված երեխային շրջապատող բոլոր մեծահասակներին էլ չէր խանգարի հիշել, որ իրենց առջև նախ և առաջ երեխա է, որին անհրաժեշտ է խաղալ, նկարել, պարել, վազվզել: Իսկ եթե հանուն սեփական հեղինակության միայն շահագործենք նրա ընդունակությունները, չապրած մանկությունը հետագայում շատ հիվանդագին կարող է անդրադառնալ նրա կյանքին, ով ինչ-որ ժամանակ եղել է օժտված երեխա:

Օժտված երեխաների 15 նշանները

Նրանք խոսում են ուսուցիչների պես

Օժտված երեխաները գիտելիքներն ավելի արագ են յուրացնում, քան միջին վիճակագրական երեխաները: Լեզվական հմտություններ յուրացնելը նույնպես նրանց հեշտ է տրվում: Օժտված երեխաները լայն բառապաշար ունեն և կարող են իրենց խոսքում օգտագործել բարդ նախադասություններ:

Նրանք նկատում են հաջորդականությունները

Հաջորդականությունների բացահայտման հմտությունը բավականին հազվադեպ է զարգացած փոքր երեխաների մոտ, եթե, իհարկե, Ձեր երեխան օժտված երեխա չէ:

Նրանք շատ են կարդում

Օժտված երեխաները անհավանական հետաքրքրասեր են: Իրենց հետաքրքրասիրությունը բավարարելու համար նրանք պետք է կարդան իրենց ձեռքն ընկած յուրաքանչյուր գիրք: Այս առանձնահատկությունն առավել վառ է արտահայտվում, եթե երեխային ինչ-որ բան խիստ դուր է գալիս:

Նրանք շատ տաղանդավոր են

Օժտվածությունը ականավոր տաղանդը նկարագրելու ևս մեկ բառ է: Որոշ երեխաներ ի բնե տաղանդավոր են սպորտում, գիտության կամ արվեստների բնագավառում: Վառ արտահայտված տաղանդը օժտված երեխայի ակնհայտ նշան է:

Նրանք գերադասում են մեծերի ու իրենցից տարիքով ավագ երեխաների ընկերակցությունը

Օժտված երեխաների համար հետաքրքիր չէ շփվել իրենց հասակակիցների հետ, քանի որ նրանց մտավոր մակարդակը գերազանցում է նրանց գիտելիքների պաշարին: Նրանք իրենց հասակակիցներին չեն հասկանում, կամ էլ նրանց համար հետաքրքիր չէ շփվել իրենց տարեկիցների հետ:

Նրանք շատ կենտրոնացած են

Օժտված երեխաների մեծ մասը կարողանում է կենտրոնանալ այն ամենի վրա, ինչն իրենց հետաքրքրում է: Ձանձրալի դասի ժամանակ օժտված երեխան կկորցնի իր այդ ունակությունը: Դրա պատճառով սխալմամբ կարելի է մտածել, որ երեխային կենտրոնացումը դժվար է տրվում:

Նրանք իրենց տարիքից ավելի հասուն են

Օժտված երեխան կարող է նաև բարձր զարգացած էմոցիոնալ ինտելեկտ ունենալ: Եթե ձեր երեխան օժտված է, դուք կարող եք նկատել, որ նրա համար հաճելի չեն իրենց հասակակիցների չարաճճիությունները: Օժտված երեխաները սովորաբար հակված չեն նման վարքագիծ ցուցաբերել:

Նրանք ինքնատիպ են

Օժտված երեխաները կարողանում են նաև խնդիրներ լուծել: Այդպիսի երեխաները ոչ միայն այլ կերպ են մոտենում ամենօրյա խնդիրների լուծմանը, այլև կարող են մտածել ինչ-որ բան բարելավելու եղանակ:

Նրանք առաջնորդներ են

Իրենց հասունության, խնդիրներ լուծելու կարողության, ինչպես նաև ոչ ստանդարտ մտածողության շնորհիվ օժտված երեխաները շատ լավ առաջնորդներ են դառնում: Իհարկե, այս առաջնորդական գծերը առավել վառ կարտահայտվեն, երբ երեխան գտնվի համապատասխան միջավայրում:

Նրանց պետք չէ ցույց տալ ճիշտ ուղղությունը

Մինչ այլ երեխաների պետք է, որ իրենց ծնողները կամ ուսուցիչներն ասեն, թե ինչպես պետք է է ճիշտ վարվել, օժտված երեխաները միանգամից անցնում են գործի ու հետո նոր հարցեր տալիս: Կամ առհասարակ հարցեր չեն տալիս, եթե կարողանում են ինքնուրույն ամեն բան հաղթահարել:

Նրանք եռանդով լի են

Օժտված երեխաները միշտ շարժման մեջ են հավանաբար այն պատճառով, որ նրանց ուղեղն անընդհատ աշխատում է: Ուշադրություն դարձրեք, որ խելացի և օժտված երեխաները հաճախ շատ արագ են խոսում: Այդպես է պատահում այն պատճառով, որ նրանք փորձում են այնպես անել, որ բառերը հասնեն մտքերի հետևից, սակայն դա նրանց այնքան էլ չի հաջողվում:

Նրանց պետք է միայնության մեջ ժամանակ անցկացնել

Ինչպես և երեխաների մեծ մասին, օժտվածներին նույնպես դուր է գալիս այլ մարդկանց հետ ժամանակ անցկացնել: Այնուամենայնիվ միայնությունը նրանց թույլ է տալիս իրենց մտքերի հետ միայնակ մնալ ու զարգացնել սեփական կրեատիվությունը: Օժտված երեխաներին դուր է գալիս միայնության մեջ կարդալ, գրել ու նկարել:

Նրանք սիրում են բնությունը

Որոշ օժտված երեխաներ, հատկապես նրանք, ում մոտ շատ բարձր են զարգացած ստեղծագործական ունակությունները, սիրում են գեղեցիկ տեսարաններն ու բնության ձայները: Նրանց հետաքրքրասիրությունն ամենից առաջ արտահայտվում է բնության գրկում:

Նրանց երբեմն չի հաջողվում իրացնել իրենց պոտենցիալը

Խելացի և օժտված երեխաները իրենց գրեթե ողջ մտավոր էներգիան ծախսում են իրենց դուր եկած բաների վրա: Հաճախ ստացվում է այնպես, որ նրանք հաջողում են մի ոլորտում ու անհաջողության մատնվում մյուսներում: Օժտված երեխաները երբեմն չեն կարողանում իրացնել իրենց բոլոր հնարավորությունները անուշադրության, թափթփվածության, կամ սովորական ձանձրույթի պատճառով:

Նրանց համար հետաքրքիր է սովորել

Օժտված երեխաներին այնքան է դուր գալիս սովորելը, որ դա հոբբի է դառնում: Իրենց մտավոր ունակությունների ու գիտելիքների որակի նկատմամբ ձգտման շնորհիվ երեխան կարող է նույնիսկ կիսել իր հասակակիցների որոշակի հետաքրքրություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը ուսումնադաստիարակչական մի օջախ է, որի գործունեությունը նպատակաուղղված է տարբեր ընդունակությունների տեր երեխաների հետ աշխատանքների իրագործմանը :

Այս ամբողջ հետազոտական աշխատանքի արդյունքում պարզ դարձավ, որ ժամանակակից մեթոդներով դաս վարելու հնարավորությունները զարգացնում են երեխաների մտավոր, հուզական, կամային և գեղագիտական գործունեությունները:

Այստեղ հարկ է առանձնացնել բացառիկ ընդունակություններով օժտված երեխաներին, հիմքում ունենալով վերջիններիս ստեղծագործական պոտենցիալը բարձրացնելու օբյեկտիվ անհրաժեշտությունը :

Նախ պետք է տեսնել երեխայի օժտվածությունը, ապա բավարար պայմաններ ստեղծել տվյալ օժտվածությունը զարգացնելու համար, քանզի օժտվածությունը նեղ սահմաններում չի զարգանում:

Այս երեխաները իրական պարգև են հասարակությանը , քանզի տաղանդն ու շնորհաշատությունն ի վերուստ են տրված և ցանկացած ժողովրդի բարգավաճումը պայմանավորված է հենց այդպիսի մարդկանցով :

Այսպիսով՝ կարող ենք վերջնական ասել հետևյալը,որ օժտված երեխան շատ ինքնատիպ ու մյուսներից մտավոր ունակություններով տարբերվող երեխա է ,ում պետք է միշտ ուշադրության կենտրոնում պահել,աշխատել՝ հաշվի առնելով տվյալ երեխայի առանձնահատկությունները, քանի որ նա ինֆորմացիա ստանալու հակում ունի և կարելի է ասել դա նրա կյանքի նպատակն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Դպիր>> ամսագիր, Նատալյա Շումակովա
2. Белова Е . С . << Одаренность малыша >>
3. Василькова Ю. В., Василькова Т. А., <<Социальная педагогика>>
4. Гильбух Ю . З. << Одаренные дети >>
5. Рогановский Н. Дифференцированное обучение (в школе) – как его осуществить? // Народное образование – 1991
6. Համացանց https://168.am/2019/03/11/1091693.html

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասի պլան

Առարկա-Մայրենի

Դասարան-2-րդ

Դասի թեմա-Հարուստն ու հովիվը

Դասի նպատակը- Զարգացնել աշակերտների իրականության հանդեպ փաստերն ու երևույթները ճիշտ ընկալելու և իրենց վերաբերմունքն արտահայտելու կարողություն:

- Ներկայացնել զրույցի անուղղակի իմաստը:
- Խոսքը օգտագործել որպես մտածողության ակտիվացման միջոց:
- Զևավորել աշխարհայացք ,ճաշակ, առածների միջոցով մշակել վարքի չափանիշներ:
- Կարդալու և պատմելու կարողության զարգացում:

Ակնկալվող արդյունքներ՝

I մակարդակ

- Բարձրաձայն կամ լուռ կընթերցեն տեքստը՝ ուշադրություն դարձնելով առանձին բառակապակցությունների ու բառախմբերի վրա։
- Կհասկանան կարդացածի բովանդակությունը։
- Կնկարագրեն գլխավոր հերոսներին։
- Կճանաչեն պարզ բառերը և հակառակ իմաստ արտահայտող բառերը;

II մակարդակ

- Սահուն,գրական շեշտի և առոգանության պահպանմամբ կընթերցեն տեքստը։
- Կպատասխանեն կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերին
- Տրված թեմայով նկարագրական բնույթի խոսք կկառուցեն։
- Կհամեմատեն երկու հերոսներին։
- Կլսեն դիմացինի խոսքը,անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկությունը կհաղորդեն

III մակարդակ

- Կհասկանան տեքստի բովանդակության,նկարագարդման և սեփական կենսափորձի միջև կապերը։
- Կվերարտադրեն պատմվածքը՝ վերաբերմունք դրսևորելով գործող անձանց արարքների նկատմամբ։
- Կլսեն խոսքը,կբանավիճեն,նոր փաստարկներ ու հիմնավորումներ կներկայացնեն։

Դասի ընթացքը՝

Խթանում-«Աղքատը հացի կարոտ է,հարուստը՝ ամեն բանի» առածի իմաստի քննարկում։

Իմաստի ընկալում- • Մինչ տեքսի ընթերցելը կատարել աշխատանք նկարագարդման շուրջ։

- Տեքստի ինքնուրույն ընթերցում հատվածներով և դրանց մեկնաբանում հարցերի միջոցով։
- Զրույց տեքսի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով;
- Տեքստի վերարտադրում և ստեղծագործական աշխատանքների կատարում։
- Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար.

Պաստառի վրա փակցվում են գունավոր ինքնակպչուն թղթեր, որոնց վրա գրված են տարամակարդակ առաջադրանքներ։

I մակարդակ ՝դեղին թուղթ-առանձին սյունակներում գրել ինչպիսին է հարուստը , ինչպիսին է հովիվը.

Գեր,առողջ,ագահ,քչակեր,շատակեր,հիվանդ,արագաշարժ,աշխատասեր, դանդաղաշարժ,բարեկազմ։

II մակարդակ՝ կանաչ թուղթ-Ա. առանձին սյունակներում գրել ինչպիսին է հարուստը, ինչպիսին է հովիվը.

Գեր,առողջ,ագահ,քչակեր,շատակեր,հիվանդ,արագաշարժ,աշխատասեր, դանդաղաշարժ,բարեկազմ։

Բ.Կազմել աղյուսակ և համապատասխան սյունակներում գրել պարզ և բարդ բառերը։

III մակարդակ ՝ կապույտ թուղթ-Ա. առանձին սյունակներում գրել ինչպիսին է հարուստը , ինչպիսին է հովիվը.

Գեր,առողջ,ագահ,քչակեր,շատակեր,հիվանդ,արագաշարժ,աշխատասեր, դանդաղաշարժ,բարեկազմ։

Բ.Կազմել աղյուսակ և համապատասխան սյունակներում գրել պարզ և բարդ բառերը։

Գ.Բարդ բառերը բաժանել բաղադրիչների

Կշռադատում- անդրադարձ,ամփոփում։

Բաժանել խմբերի և առաջարկել կազմել այն ամենի ցանկը, ինչը կօգնի մարդուն առողջ լինելու։Կարելի է կիրառել<< Ձնագնդիկ>> մեթոդական հնարը;Իսկ վերջում ամբողջ դասարանով ձևավորում են մեկ պաստառ՝ միավորելով բոլոր խմբերի գաղափարները։